ՀԿԴ/0122/02/22
ՇԴ1/0143/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հունվարի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Սոցիալական ապահովության ծառայության ընդդեմ Մելինե Թևոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ՀԿԴ/0122/02/22 (ՇԴ1/0143/02/21) քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի հունվարի 9-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Սոցիալական ապահովության ծառայությունը 2021 թվականի հունվարի 27-ին հայց է ներկայացրել Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Մելինե Թևոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

2. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ հայցն ընդունվել է վարույթ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ քաղաքացիական գործը հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը:

3. 2022 թվականի դեկտեմբերի 30-ին թիվ ՇԴ1/0143/02/21 քաղաքացիական գործը ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, որին շնորհվել է ՀԿԴ/0122/02/22 համարը:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի հունվարի 9-ի որոշմամբ քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի հունվարի 10-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված և 2022 թվականի օգոստոսի 20-ին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-335-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին, 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին, 41-րդ հոդվածին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ մասին, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ սոցիալական ապահովության ծառայությունը հանդիսանալով պետական իրավասու մարմին, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, սույն հայցը ներկայացրել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան այն ժամանակ, երբ դեռևս չի գործել ՀՀ հակակոռուպցիոն դատարանը:*

Այսինքն՝ Դատարանը փաստում է, որ դատախազությունը պետության շահերի պաշտպանության հայցերով դիմում է դատարան միայն այն դեպքում, երբ պետական իրավասու մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, հայց չի ներկայացրել դատարան:

Վերոգրյալի հիման Դատարանը գտնում է, որ Հայցվորի կողմից քաղաքացիական դատավարության կարգով ներկայացվել է պետության գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայց, ինչը չի տարբերվում վերը նշված նորմով սահմանված դատախազի կողմից պետության գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայց ներկայացնելու բնույթից և բովանդակությունից, այն հետապնդում է բացառապես նույն պետության գույքային շահերի պաշտպանության նպատակը, սույն գործով դեռևս անցում չի կատարվել դատաքննության փուլ, գործը գտնվում է նախնական քննության փուլում, և գործը ենթակա է քննության հակակոռուպցիոն դատարանում, հետևաբար Դատարանը գտնում է, որ թիվ ՇԴ1/0143/02/21 քաղաքացիական գործը պետք է ըստ ենթակայության հանձնել ՀՀ հակակոռուպցիոն դատարանին»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 24-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշման թիվ 1 հավելվածի 58-րդ, 60-րդ, 88-րդ մասերին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և նույն հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 41-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին՝ Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հունվարի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Հակակոռուպցիոն դատարանի ենթակայության շրջանակը որոշելիս օրենսդիրը որպես ուղենիշ դիտարկել է միայն կոռուպցիոն բնույթի գործերը նույն դատարանի ինչպես քրեաիրավական, այնպես էլ քաղաքացիաիրավական մասնագիտացման դատավորների համար: Օրենսդրի կամքի այսպիսի դրսևորումը մի կողմից բխում է հակակոռուպցիոն ռազմավարության համապատասխան դրույթներից,*

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 86-87:

մասնավորապես՝ Հակակոռուպցիոն դատարանի՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մարմնի առաքելությունից, մյուս կողմից պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնագիտացված դատարանը, որն ընդգրկում է տարբեր մասնագիտացման դատավորներ, որպես այդպիսին հանդես գալու համար պետք է ունենա որևէ ընդհանուր չափանիշ, որպիսին կարող է դիտարկվել այդ դատարանին ենթակա գործերի ընդհանրական բնույթը:

(...) Հակակոռուպցիոն դատարանը՝ որպես մասնագիտացված դատարան, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մարմին է, որը կոչված է ապահովելու կոռուպցիոն բնույթի գործերի քննությունը:

(...) [Պ]ետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով հայցի առարկան պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության պահանջն է, իսկ օբյեկտը՝ պահանջի հիմքում ընկած պետության գույքային և ոչ գույքային շահը: Այսինքն՝ հայցը կարող է դիտարկվել որպես պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված միայն այն դեպքում, երբ պետության իրավասու մարմինը քաղաքացիական շրջանառության այլ մասնակիցների դեմ ներկայացնի պետության՝ ենթադրաբար խախտված գույքային կամ ոչ գույքային շահի պաշտպանության պահանջ: Այլ կերպ ասած՝ քննարկվող հայցերով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությունը պետք է ուղղակիորեն բխի հայցի առարկայից:

(...) [Պ]ետության շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասություն ունեն բացառապես պետական մարմինները: Դատախազն այդպիսի հայց կարող է ներկայացնել միայն օրենքով նախատեսված դեպքերում, ինչը պայմանավորված է վերջինիս հատուկ սահմանադրահիրավական կարգավիճակով:

(...) Օրենսդրի կամքն ուղղված է եղել նրան, որ Հակակոռուպցիոն դատարանում պետք է քննվեն միայն դատախազի կողմից ներկայացված պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերը, որոնց քննության համար բավարար է համարվել 5 քաղաքացիական մասնագիտացման դատավորի թվաքանակը՝ նկատի ունենալով նաև, որ Հակակոռուպցիոն դատարանի դատական տարածքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքն է:

(…) Հակակոռուպցիոն դատարանի էությունից հետևում է, որ այս դատարանի քննությանը ենթակա քաղաքացիական գործերը ևս պետք է լինեն կոռուպցիոն բնույթի: Այսինքն՝ պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցը Հակակոռուպցիոն դատարանին ենթակա դիտարկելու համար անհրաժեշտ է, որ նշված հայցի հիմքում դրվեն այնպիսի փաստեր, որոնք այս կամ այն կերպ կապահովեն ներկայացված պահանջի կոռուպցիոն բնույթը:

(…) Դատարանը գտնում է, որ բացակայել է թիվ ՇԴ1/0143/02/21 քաղաքացիական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին հանձնելու ենթակայության նախապայմանը, քանի որ գործով ներկայացված չէ դատախազի կողմից հարուցված պետության գույքային շահի պաշտպանության վերաբերյալ հայց»[2]*:*

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0122/02/22 (ՇԴ1/0143/02/21) քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Սոցիալական ապահովության ծառայության ընդդեմ Մելինե Թևոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ (…) հակակոռուպցիոն դատարանը»:*

2021 թվականի ապրիլի 14-ին լրացված և մինչև 2023 թվականի հունվարի 7-ը գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (…) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (…)»:*

---

[2] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 94-101:

2022 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված և 2023 թվականի հունվարի 7-ին ուժի մեջ մտած՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-575-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է և գործում է հետևյալ խմբագրությամբ. *«Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (…) դատախազի կողմից հարուցված՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը (…)»:*

9. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ հակակոռուպցիոն դատարանին ենթակա քաղաքացիական գործերն են՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը: Նշվածը հիմք է տալիս փաստելու, որ օրենսդիրը հակակոռուպցիոն դատարանի ենթակայությանն է վերապահել ոչ թե այն գործերը, որոնք **առնչվում են պետության գույքային և ոչ գույքային շահերին**, այլ այն հայցերով գործերը, որոնք **ուղղված են այդ շահերի պաշտպանությանը:** Այսինքն՝ հակակոռուպցիոն դատարանի ենթակայական իրավազորությունը սահմանափակված է **պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերի** քննությամբ: Հարկ է նաև նշել, որ այս մոտեցումը բխում է 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի ընդունման հիմնավորումներից, համաձայն որոնց, օրենսդիրը հակակոռուպցիոն դատարանին օժտել է մասնագիտացված դատարանի կարգավիճակով և ըստ այդմ՝ նախատեսել այդ

դատարանի քննությանը ենթակա քաղաքացիաիրավական վեճերի սահմանափակ շրջանակ[3]:

Բացի այդ, նույն օրենքի հիմնավորումներից հետևում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների թվակազմը սահմանելիս (5 դատավոր), հիմք են ընդունվել ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների և դատախազների կողմից դատարաններ ներկայացված՝ պետական շահերի պաշտպանության հայցերի վերաբերյալ վիճակագրական տվյալները: Նշվածը հիմք է տալիս հետևություն անելու, որ **դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-331-Ն օրենքով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում կատարված լրացմամբ և հակակոռուպցիոն դատարանի ստեղծմամբ օրենսդրի նպատակն է եղել այդ դատարանի ենթակայությանը վերապահել պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերի քննությունը, որոնք ներկայացվել են ՀՀ դատախազության կողմից**[4]:

Վերոգրյալի մասին է վկայում նաև այն, որ 2022 թվականի դեկտեմբերի 23-ին ընդունված և 2023 թվականի հունվարի 7-ին ուժի մեջ մտած՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-575-Ն ՀՀ սահմանադրական օրենքով օրենսդիրը, վերը նշված տրամաբանությանը համապատասխան, հստակեցրել է հակակոռուպցիոն դատարանին ենթակա քաղաքացիական գործերի շրջանակը՝ սահմանելով, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ենթակա են ոչ թե քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված բոլոր հայցերով, այլ **բացառապես ՀՀ դատախազության կողմից հարուցված՝** քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված

---

[3] Տե՛ս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի նախագծի հիմնավորումները՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draftreading_docs7/K-785_DR2.pdf

[4] Տե՛ս նույն տեղում:

քաղաքացիական գործերը: Այսինքն՝ հակակոռուպցիոն դատարանի ենթակայական իրավազորությունը սահմանափակված է միայն **դատախազի կողմից հարուցված պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերի** քննությամբ:

10. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Սոցիալական ապահովության ծառայությունը Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել հայց ընդդեմ Մելինե Թևոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին[5], որը Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[6],

- հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված և 2022 թվականի օգոստոսի 20-ին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-335-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին, 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված՝ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3.1-րդ մասին, 41-րդ հոդվածին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 4-րդ մասին, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Հակակոռուպցիոն դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ սույն գործով հարուցված հայցը վերաբերում է պետության գույքային շահին, ուստի նշված քաղաքացիական գործը պետք է հանձնել Հակակոռուպցիոն դատարանի քննությանը[7],

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին, 24-րդ հոդվածի 3-րդ

---

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

մասին, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշման թիվ 1 հավելվածի 58-րդ, 60-րդ, 88-րդ մասերին, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և նույն հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 41-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հունվարի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ Հակակոռուպցիոն դատարանի էությունից հետևում է, որ այս դատարանի քննությանը ենթակա քաղաքացիական գործերը ևս պետք է լինեն կոռուպցիոն բնույթի: Այսինքն՝ պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցը Հակակոռուպցիոն դատարանին ենթակա դիտարկելու համար անհրաժեշտ է, որ նշված հայցի հիմքում դրվեն այնպիսի փաստեր, որոնք այս կամ այն կերպ կապահովեն ներկայացված պահանջի կոռուպցիոն բնույթը: Հակակոռուպցիոն դատարանը գտել է, որ բացակայել է թիվ ՇԴ1/0143/02/21 քաղաքացիական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին հանձնելու ենթակայության նախապայմանը, քանի որ գործով ներկայացված չէ դատախազի կողմից հարուցված պետության գույքային շահի պաշտպանության վերաբերյալ հայց[8]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է փաստել, որ սույն գործով Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացվել Սոցիալական ապահովության ծառայության, և ոչ թե ՀՀ դատախազության կողմից:

Այսինքն՝ տվյալ դեպքում ապահովված չէ օրենսդրի կողմից սահմանած՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից գործերի քննության անհրաժեշտ նախապայմանը:

12. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0122/02/22 (ՇԴ1/0143/02/21) քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Սոցիալական ապահովության ծառայության ընդդեմ Մելինե Թևոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

13. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Սոցիալական ապահովության ծառայության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0122/02/22 (ՇԴ1/0143/02/21) քաղաքացիական գործը ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՀԿԴ/0122/02/22 (ՇԴ1/0143/02/21) քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Սոցիալական ապաովության ծառայության ընդդեմ Մելինե Թևոյանի գումարի բռնագանձման պահանջի մասին, ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ